ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք,
գ. Լեռնապատ, 27 փողոց. 7/6 , Հեռ. հեռախոս
/032268781/ , Lernapat.Lori@mta.gov.am

N 52
06 մարտ 2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 33 հոդվածի 9-րդ կետով՝ Ձեզ ենք ներկայացնում Լեռնապատ համայնքի ավագանու N4-Ն, N5-Ա որոշումները:

06/03/2017

X _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ**

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Հ. Վարդանյան
032268781

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
գ.Լեռնապատ, հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 4-Ն

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի, 8-րդ մասով, Իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով ՝ Լեռնապատ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Լեռնապատ համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի 1-ի:
2. Հաստատել 2016 թվականի Լեռնապատ համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի 2-ի:
3. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱՋՅԱՆ ԱՆՆԱ
2. ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ՄԱԼԽԱՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

Հավելված 1

Լեռնապատ համայնքի ավագանու

27.02.2017թվականի թիվ04-Ն որոշման

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

	Պլանավորված է /հազ.դրամ/	Կատարված է /հազ,դրամ/	%
Եկամտային մաս	49154,4	49176,0	100,0
Ծախսերի մաս	58580,5	45159,9	77,1
Տարեսկզբի ազատ մնացորդ	9426,1/հազ,դրամ/		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

Հավելված 2

Լեռնապատ համայնքի ավագանու

27.02.2017թվականի թիվ04-Ն որոշման

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016ԹԹ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ը/կ	Միջոցառման անվանումը	Անցկացման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	Նշումներ
1	3	4	5	8
1.	Ներքին ցանցի գազատարի կառուցում- մասնակի իրականացվել է գազաֆիկացում, մասնավորապես՝ գյուղի հյուսիս-արևմտյան հատվածում կառուցվել է ներքին ցանցի գազատար:	2013թ. մայիսից - 2016թ	Համայնքի կողմից հատկացված ֆինանսական միջոցներով, բնակիչների ներդրումներով	շարունակա կան
2.	Միջհամայնքային ճանապարհի ասֆալտապատում՝ որը ամբողջությամբ իրականացնել հնարավոր չէ բյուջեի հաշվին	2013-2016թթ	պետական բյուջեից ֆինանսավորում չի եղել	չի կատարվել
3.	Ճանապարհների վերանորոգման աշխատանքներ՝ սելավներից, ջրափոսերի ծածկում, ձյան մաքրման աշխատանքներ	տարվա ընթացքում և ձմռան ամիսներին	համայնքի բյուջեից յուրաքանչյուր տարի 400հազ դրամ դիզ վառելիքի գումար, <<Քարաբերդ>> ՍՊԸ-ի և բնակիչների միջոցով	ընթացիկ, շարունակա կան
4.	Վերանորոգվել է համայնքի արոտագնաց ճանապարհները	2013թ հուլիս-օգոստոս 2014 թ. հուլիս-օգոստոս 2015թ. հուլիս-օգոստոս	Համայնքի ֆինանսական միջոցներով, բնակիչների մասնակցություն	շարունակա կան
5.	Գերեզմանների ճանապարհի բարեկարգում- կատարվել է գերեզմաններ տանող ճանապարհների բարեկարգում, բնակիչների աշխատուժի միջոցով, բյուջեից տրամադրվել է վառելիք, կատարվել է ավազով, խճաքարով փոսալցում, ջրահեռացման ակոսների բացում ,Քարաբերդ ՍՊԸ-ն տրամադրել է տեխնիկա, ավազ և խիճ	2013-2016թթ	բյուջեից մասնակի ֆինանսավորում և ակնկալում ենք պետության և բարերարների աջակցությունը	շարունակա կան

6.	Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարաշինություն	2013-2016	պետական բյուջե, պետական ծրագիր	չի կատարվել
7.	Համայնքի ֆինանսական միջոցներով նորոգվել է նոր գյուղի ոռոգման ներքին ցանցի համակարգը և խմելու ջրի ապահովումը Նոր գյուղի որոշ թաղամասերում	2014-2016թ	համայնքի բյուջեից, ակնկալում ենք <<Լոռիջրմուղ>> ՓԲԸ-ի գերմանական վարկի ներդրումները	շարունակա կան
8.	մասնակի վերանորոգվել է համայնքի ենթակայության տակ գտնվող մանկապարտեզի տնակային շինությունը: Համայնքի մանկապարտեզին գազաֆիկացմամբ և խմելու ջրով ապահովման նպատակով կառուցվել է խմելու ջրի և գազատարի ներքին ցանց:	2013 թ. հուլիս	Համայնքի ֆինանսական միջոցներով	
9.	համայնքի ենթակայության տակ գտնվող մանկապարտեզին տրամադրվել է սառնարան և գազօջախ:	2015թ սեպտեմբեր	Համայնքի ֆինանսական միջոցներով	շարունակա կան
10.	Մանկապարտեզի շենքի կառուցում- Կառուցվել է Նոր մանկապարտեզ պետական ծրագրով, համայնքի բյուջեով կառուցվել է հենապատ, սելավներից պաշտպանելու համար	2016թ.	պետական բյուջե, համայնքի տարեկան բյուջե	շարունակա կան
11.	Բուժ-Ամբուլատորիայի կառուցում- Կառուցվել է Նոր բուժ-ամբուլատորիա պետական ծրագրով, համայնքի բյուջեից 2,5 մլն դրամ ներդրում է կատարվել շինարարության համար	2014-2015թթ	պետական բյուջե, համայնքի տարեկան բյուջե	ավարտված է
12.	Սպորտ-Մշակույթային կենտրոնի կառուցում-Հին ամբուլատորիայի շենքը վերանորոգվել է մարզադահլիճի՝	2015թ մայիս-նոյեմբեր	համայնքի բյուջեից հատկացվել է 3 մլն ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցներ:	ավարտված է
13.	Մարզական գույքի ձեռքբերում-ըմբշամարտի գորգեր և մատեր	2016թ	համայնքի բյուջե և բարերարներ	շարունակա կան
14.	Բնական աղետներից առաջացած վնասների վերականգնում	2013-2016թթ	համայնքի բյուջեից, յուրաքանչյուր տարի 350հազ դրամ	ընթացքիկ, շարունակա կան
15.	Հին տնակային մանկապարտեզի շինությունը հանդիսությունների սրահի վերափոխում, սկսվել է անհրաժեշտ շինարարական աշխատանքները	2016թ.	համայնքի տարեկան բյուջե	շարունակա կան
16.	մանկապարտեզի հարակից տարածքում տեղադրվել է խաղահրապարակ	2016թ.	համայնքի բյուջեի	շարունակա կան

			միջոցների հաշվին, Կարմիր Խաչի և այլ մասնակցություն՝ օգնություն համայնքի բնակիչների կողմից	
17.	Հին և Նոր գյուղերի իրար կապող ճանապարհների լուսավորվածության ցանցի կառուցում- համայնքային կենտրոնի շենքից մինչև հին գյուղի գյուղամեջ անցեկացվել է լուսավորվածություն	2015թ	համայնքի բյուջեի հաշվին 6մլն. դրամ	շարունակա կան
18.	Մշակույթային կյանքի զարգացում- կատարվել է համայնքապետարանի դահլիճի նստարանների պաստառապատում, պատուհանների շերտավարագույրների անցկացում, ձեռք է բերվել համայնքապետարանի համար գույք	2015թ	համայնքի բյուջեի հաշվին	շարունակա կան
19.	Մեծահասակների հանգստի սենյակի կառուցում	2016թ	համայնքի բյուջեի հաշվին	շարունակա կան
20	Աղբահանության կազմակերպում և նոր գյուղի կոյուղու համակարգի կառուցում	2013-2016թթ	ՀՀ կառավարության, միջազգային բարեգործական կազմակերպությունների հովանավորության բացակայություն, սուղ համայնքային բյուջե	չի կատարվել

Համայնքի ղեկավար Ս. Աբազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
գ.Լեռնապատ, հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 5-Ա

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 14.02.2017թ. թիվ 13 դրական եզրակացությունը և ղեկավարվելով ՀՀ ՏԻՄ օրենքի18-րդ հոդվածի 29-րդ կետով, ՀՀ կառավարության 2011 թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգի 17-րդ կետով,

Լեռնապատ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Լեռնապատ համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, 06-041-0312-0003 կադաստրային ծածկագրով 0,02 հա, գյուղատնտեսական արոտը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբեկտների նպատակային,կապի հողերի գործառնական նշանակության:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին պետական գրանցումից հետո Լեռնապատ համայնքի հողերի ընթացիկ հաշվառման տվյալներում կատարել համապատասխան փոփոխություններ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱՋՅԱՆ ԱՆՆԱ
2. ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ
4. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ՄԱԼԽԱՍՅԱՆ ԿԱՐԵՆ
6. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ**